ՀՍՏ 393-2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Հայկական այբուբենի տառերի գրադարձությունը լատիներեն այբուբենի տառերով
Կանոններ և կիրառման ցուցումներ

ARMSTANDARD
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆ 2017

Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և ստանդարտացման աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀՍ 1.0-2013 «Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Հիմնական դրույթներ» ստանդարտով:

Տեղեկություններ ստանդարտի մասին

1. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից

2. ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է «Հայկական այբուբենի տառերի գրադարձությունը լատիներեն այբուբենի տառերով և դրա կիրառման ցուցումներ» ազգային ստանդարտի մշակման աշխատանքային խմբի կողմից:

3. ՀԱՍՏԱՏՎԵԼ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրենի 2017 թվականի նոյեմբերի 3-ի N 67-Լ հրամանով

4. ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում, հմ. 1412-2017

5.Գործարկվում է առաջին անգամ

Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրապարակվում են «Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ» տեղեկատուում: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրապարակվի նշված տեղեկատուում: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ համացանցային կայքում (www.sarm.am):

ARMSTANDARD
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

Սույն ստանդարտը չի կարելի լրիվ կամ մասնակիորեն վերարտադրել, բազմացնել և տարածել որպես պաշտոնական հրատարակություն առանց ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի թույլտվության

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ II
1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ 1
2. ՆՈՐՄԱՏԻՎ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐ 1
3. ՏԵՐՄԻՆՆԵՐ և ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 1
4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 2
5. ՀԱՄԱԿԱՐԳ Բ՝ ՊԱՐԶ ԳՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ 3

ARMSTANDARD
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

© SARM- Բոլոր իրավունքները պաշտպանված են

ARMSTANDARD

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Հայկական այբուբենի տառերի գրադարձությունը լատիներեն այբուբենի տառերով. Կանոններ և կիրառման ցուցումներ

Транслитерация знаков армянского алфавита знаками латинского алфавита. Правила и руководство по применению

Transliteration of Armenian characters into Latin characters. Rules and guidance for application

Գործարկման թվականը՝ 2017-11-15

1. Կիրառման ոլորտ

Սույն ստանդարտով սահմանվում են հայկական այբուբենի տառերը լատիներեն այբուբենի տառերով փոխարկելու գրադարձության կանոնները և այդ կանոնների գործնական կիրառման ուղեցույցը:

Սույն ստանդարտով սահմանվող կանոնները կիրառելի են բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է հայկական այբուբենի տառերով տեքստը ճշգրիտ ներկայացնել լատիներեն այբուբենի տառերով և հնարավոր է նույն տրամաբանությամբ վերականգնել բնագիր հայերեն տեքստը, մասնավորապես՝ համակարգչային ցանցերով փաստաթղթերի փոխանցման դեպքերում:

Սույն ստանդարտը չի տարածվում հայերենով ձայնագրված բառերի ձայնային հնչյունների լատիներեն այբուբենի տառերով ներկայացման կանոնների վրա:

Քարտեզների վրա ազգային աշխարհագրական անվանումների ներկայացման կանոնները սահմանվում են օրենսդրությամբ սահմանված ղեկավար փաստաթղթերին համապատասխան:

2. Նորմատիվ վկայակոչումներ

Սույն ստանդարտում վկայակոչված են փաստաթղթեր՝ դրանց հրապարակման տարեթվով կամ առանց դրա: Տարեթվով վկայակոչված փաստաթղթերի համար դրանց հետագա փոփոխությունները կամ վերանայումները կիրառելի են: Առանց տարեթվի վկայակոչված փաստաթղթերը (ներառյալ յուրաքանչյուր փոփոխություն) կիրառելի են միայն վերջին հրատարակությամբ:

Սույն ստանդարտում վկայակոչված է հետևյալ ստանդարտը՝

ԻՍՕ 9985 Տեղեկատվություն և փաստաթղթավորում. Հայկական այբուբենի տառերի գրադարձությունը լատիներեն այբուբենի տառերով

3. Տերմիններ և սահմանումներ

Սույն փաստաթղթի նպատակների համար կիրառվում են հետևյալ տերմինները՝ համապատասխան սահմանումներով.

ARMSTANDARD
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏԱՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

Պաշտոնական հրատարակություն
© SARM- Բոլոր իրավունքները պաշտպանված են

3.1 գրային համակարգ՝ որևէ լեզվով գրավոր (գրաֆիկական) նշանների և կանոնների ամբողջություն, որն ընդունված է թղթի կամ այլ նյութի վրա տեքստերի, արտահայտությունների, հաղորդագրությունների արտապատկերման համար

3.2 գրային համակարգերի փոխարկում՝ որևէ լեզվով կազմված տեքստերի ներկայացում մեկ այլ լեզվի համար ընդունված գրի համակարգի միջոցներով

3.3 գրադարձություն՝ որևէ գրի կամ այբուբենի վերարտադրությունը կամ փոխարկումն այլ այբուբենով, երբ մեկ գրային համակարգի յուրաքանչյուր նշանը (կամ նշանների հաջորդականությունը) փոխարկվում է մեկ այլ գրային համակարգի նույն նշանով (կամ նշաններիհաջորդականությամբ)

3.4 վերափոխարկում՝ այլ այբուբենի փոխարկված տառերը նախնական ձևին փոխարկելու գործընթաց

3.5 խիստ գրադարձություն՝ որևէ գրային համակարգի յուրաքանչյուր նշանի փոխարկում մեկ այլ լեզվով գրային համակարգի միայն մեկ նշանով, այդ թվում՝ կիրառելով դիակրիտիկ նշաններ

3.6 պարզ փոխարկում՝ որևէ գրային համակարգի յուրաքանչյուր նշանի փոխարկում մեկ այլ լեզվով գրային համակարգի մեկ և ավելի նշանների

3.7 հանրաճանաչ փոխարկում, որը թույլ է տալիս օտարալեզու անվանումները գրել միևնույն ընդունված ձևով: Այս դեպքում պետք է հաշվի առնել այդ լեզվի հնչյունական և գրային լեզվականոնները

3.8 այբուբեն՝ որևէ լեզվի տառերի ամբողջությունը՝ ընդունված դասավորությամբ

3.9 տառ՝ տվյալ լեզվի այբուբենի նշաններից յուրաքանչյուրը

3.10 գրային այբբենական համակարգ՝ գրային համակարգ, որը հիմնված է այբուբենի կիրառման վրա

3.11 լատիներեն այբուբեն՝ լատիներեն գրային համակարգի տառերից բաղկացած այբուբեն

3.12 դիակրիտիկ նշան՝ նշան, որը միանալով այբուբենի որևէ տառին՝ նրան տալիս է մեկ այլ ինքնուրույն հնչյուն կամ միևնույն հնչյունի նրբերանգ

ARMSTANDARD
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

4. Ընդհանուր դրույթներ

4.1 Սույն ստանդարտով սահմանվում են գրային համակարգի փոխակերպման կանոններ՝ հայերեն գրավոր հաղորդագրությունները լատինատառի վերածելու նպատակով: Նման գրադարձությունները կարող են կատարվել ինչպես ավտոմատ տեղեկատվական և հաղորդակցական համակարգերում, այնպես էլ մարդու կողմից մշակման դեպքում: Գրադարձությունը պահանջում է որևէ լեզվով ստեղծված տեքստային տվյալների հստակ և ճշգրիտ ներկայացում մեկ այլ լեզվի միջոցով:

© SARM- Բոլոր իրավունքները պաշտպանված են

Գրադարձության կանոնները հիմնված են հետևյալ սկզբունքների վրա՝

-միարժեքություն, որն ապահովում է բնագիր լեզվի գրերի (տառերի, բառերի, արտահայտությունների) ներկայացման կայունությունը՝ այլ (փոխարկվող) գրերի միջոցով,

-դարձունակություն, որն ապահովում է տեքստի միանշանակ ճշգրիտ վերականգնման հնարավորություն բնագիր լեզվով,

-պարզություն, որն ապահովում է բնագիր տեքստից դեպի մեկ այլ լեզվով տեքստի փոխարկման և հակառակ ընթացակարգի ինքնաշխատ (ավտոմատ) կատարումը՝ պարզ ալգորիթմների հիման վրա, որոնք առավելապես հանգեցնում են աղյուսակների կիրառմանը՝ գրային մեկ համակարգի նշանները փոխարինելով մեկ այլ գրային համակարգի նշաններով:

4.2 Սահմանվում է հայկական այբուբենի տառերի լատիներեն այբուբենի տառերով գրադարձության երկու համակարգ.

Ա համակարգ՝ խիստ գրադարձություն՝ դիակրիտիկ նշանների կիրառմամբ, որը սահմանված է ԻՍՕ 9985 ստանդարտով,

Բ համակարգ՝ պարզ գրադարձություն՝ տառի կամ տառերի համակցության կիրառմամբ՝ համաձայն սույն ստանդարտում սահմանված կանոնների:

Ա և Բ համակարգերի կիրառումը որոշում է գրադարձություն իրականացնողը՝ ելնելով գրադարձության նպատակից, և այդ մասին պետք է նշվի փաստաթուղթն ուղեկցող նյութերում: Մեկ փաստաթղթի կազմում պետք է օգտագործել միայն մեկ համակարգ կամ յուրաքանչյուր անգամ նախօրոք որոշել գրադարձման ձևը և հատուկ ցուցիչներով նշել տեքստում: Այս կանոնից բացառություն են կազմում միայն այն փաստաթղթերը, որտեղ մեջբերվում են այլ փաստաթղթում գրադարձված տեքստերը՝ նշելով մեջբերման աղբյուրը:

5. Համակարգ Բ՝ պարզ գրադարձություն

5.1 Տառերի համակցության կիրառմամբ գրադարձությունը պարզ գրադարձություն է: Այն ցանկացած հայկական տառ ներկայացնում է լատիներեն այբուբենի տառով կամ տառակապակցություններով:

5.2 Անունների և ազգանունների հայերենից անգլերեն (ինչպես նաև ցանկացած լեզվով) տառադարձությունն իրականացվում է լատիներեն գրային համակարգի միջոցներով:

Հայերենի այն հնչույթները, որոնք չունեն լատիներեն համարժեքներ, տառադարձվում են նրանց՝ առավել մոտ հնչույթներ արտահայտող տառերով կամ տառակապակցություններով՝ սույն ստանդարտի Աղյուսակ 1.-ին համապատասխան:

ARMSTANDARD
ՀՀ ԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

Աղյուսակ 1. Հայերեն գրային համակարգի փոխարկումը լատիներեն գրային համակարգով

Հայերեն այբուբենի տառեր	Լատիներեն այբուբենի տառեր	Բացատրություն
ա	**a**	Հայերենի –*ա*- տառը տառադարձվում է լատիներեն -*a*- տառով, օրինակ՝ *Ադամ - Adam, Անի - Ani, Արեգ* - Areg, *Գագիկ* – Gagik
բ	**b**	Հայերենի –*բ*- տառը տառադարձվում է լատիներեն-b- տառով, օրինակ՝ *Բագրատ - Bagrat, Բալասան - Balasan, Բավական – Bavakan*
գ	**g**	Հայերենի –*գ*- տառը տառադարձվում է լատիներեն -*g*- տառով, օրինակ՝ Գարիկ - Garik , Գայանե - Gayane, Գարեգին - Garegin
դ	**d**	Հայերենի –*դ*- տառը տառադարձվում է լատիներեն -d- տառով, օրինակ՝ Դերենիկ - Derenik, Դարեջան - Darejan, Վարդան – Vardan
ե	**ye, e**	Հայերենի –*ե*- տառը տառադարձվում է. - բառասկզբում *Ye*- տառակապակցությամբ, օրինակ՝ *Երվանդ - Ye*rvand, Երանուհի - Yeranuhi, - բառամիջում **և** - բառավերջում **e** տառով, օրինակ՝ *Մեսրոպ – Mesrop,* *Նարինե* - Narin*e, Կարինե – Karine* և այլն
զ	**z**	Հայերենի -*զ*- տառը տառադարձվում է լատիներեն-z- տառով, օրինակ՝ Զաբել - Zabel, Զանան - Zanan, Զավեն – Zaven
է	**e**	Հայերենի –*է*- տառը տառադարձվում է լատիներեն -*e*- տառով, օրինակ՝ Էդգար - Edgar, Էլզա – Elza:
ը	**i**	Հայերենի *ը*-ն տառադարձվում է լատիներեն -i- տառով, օրինակ՝ Ընձակ – Indzak, Ըղձուհի - Ighdzuhi
թ	**th**	Հայերենի -*թ*- տառը տառադարձվում է լատիներեն-th- տառակապակցությամբ, օրինակ՝ Թաթուլ - Thathul, Թագուհի – Thaguhi
ժ	**zh**	*Ժ* տառը տառադարձվում է է –*zh*- տառակապակցությամբ, օրինակ՝ Ժիրայր –Zhirayr, Ժաննա – Zhanna
ի	**i**	Հայերենի -*ի*- տառը տառադարձվում է լատիներեն -i- տառով, օրինակ՝ Իշխան - Ishkhan, Իսկուհի – Iskuhi
լ	**l**	Հայերենի -*լ*- տառը տառադարձվում է լատիներեն -l- տառով, օրինակ՝ Լիլյա - Lilya, Լևոն – Levon
խ	**kh**	Հայերենի -*խ*- տառը տառադարձվում է լատիներեն -kh- տառակապակցությամբ, օրինակ՝ Խանդութ – Khanduth, Խաչիկ – Khachik
ծ	**ts**	Հայերենի -*ծ*- տառը տառադարձվում է լատիներեն -ts- տառակապակցությամբ, օրինակ՝ Ծատուր – Tsatur
կ	**k**	Հայերենի -*կ*- տառը տառադարձվում է լատիներեն -k- տառով, օրինակ՝ Կարինե - Karine, Կարեն – Karen

© SARM- Բոլոր իրավունքները պաշտպանված են

հ	**h**	Հայերենի *–հ-* տառը տառադարձվում է լատիներեն -h- տառով, օրինակ՝ Համեստ - Hamest, Հովիկ – Hovik
ձ	**dz**	Հայերենի *-ձ-* տառը տառադարձվում է լատիներեն -dz- տառակապակցությամբ, օրինակ՝ Փառանձեմ – Parandzem
ղ	**gh**	Ղ տառը տառադարձվում է *–gh-* տառակապակցությամբ: Օրինակ՝ Մուշեղ - Mushegh, Աղամիր – Aghamir
ճ	**tch**	Հայերենի *-ճ-* տառը տառադարձվում է լատիներեն –tch- տառակապակցությամբ, օրինակ՝ Տաճատ - Tatchat, Ճուտիկ – Tchutik
մ	**m**	Հայերենի *–մ-* տառը տառադարձվում է լատիներեն -մ- տառով, օրինակ՝ Միսակ - Misak, Մայա – Maya
յ	***y***	Հայերենի -յ- տառը տառադարձվում է լատիներեն -y- տառով, օրինակ՝ Մանյա - Manya, Փայլակ – Paylak
ն	**n**	Հայերենի *-ն-* տառը տառադարձվում է լատիներեն -n- տառով, օրինակ՝ Նարեկ - Narek, Նարինե – Narine
շ	**sh**	Հայերենի *-շ-* տառը տառադարձվում է լատիներեն -sh- տառակապակցությամբ, օրինակ՝ Շուշան - Shushan, Շամիրամ – Shamiram
ո	**vo, o**	Հայերենի *–ո-* տառը տառադարձվում է. - բառասկզբում լատիներեն *vo-*- տառակապակցությամբ, օրինակ՝ - Ոսկան – Voskan, Ոստանիկ – Vostanik. - բառամիջում և բառավերջում *-o-* տառով, օրինակ՝ Պողոս – *Poghos*, Մարո – *Maro*, Սարո – *Saro*
չ	**ch**	Հայերենի *-չ-* տառը տառադարձվում է լատիներեն -ch- տառակապակցությամբ, օրինակ՝ Չինար – Chinar
պ	**p**	Հայերենի *-պ-* տառը տառադարձվում է լատիներեն -p- տառով, օրինակ՝ Պարույր – Paruyr
ջ	**j**	Հայերենի *-ջ-* տառը տառադարձվում է լատիներեն -j- տառով, օրինակ՝ Ջանիկ – Janik
ռ	**r**	Հայերենի *-ռ-* տառը տառադարձվում է լատիներեն -r- տառով, օրինակ՝ Ռազմիկ – Razmik, Ռաֆայել - Rafayel, Ռիմա – Rima
ս	**s**	Հայերենի *ս* տառը տառադարձվում է լատիներեն –***s***- տառով, օրինակ՝ Սեդրակ - *S*edrak, Ամասիկ - Amasik, Իսաբեկ - I*s*abek
վ	**v**	Հայերենի *-վ-* տառը տառադարձվում է լատիներեն -v- տառով, օրինակ՝ Վարվառա – Varvara, Վարսենիկ – Varsenik
տ	**t**	Հայերենի *-տ-* տառը տառադարձվում է լատիներեն -t- տառով, օրինակ՝ Տաթև - Tathev, Տիգրան – Tigran
ր	**r**	Հայերենի *-ր-* տառը տառադարձվում է լատիներեն -r- տառով, օրինակ՝ Ռաֆֆի - Raffi , Պարույր – Paruyr
ց	**c**	Հայերենի *-ց-* տառը տառադարձվում է լատիներեն -c- տառով, օրինակ՝ Ցոլակ – Colak
ու	**u**	Հայերենի *-ու-* տառը տառադարձվում է լատիներեն -u- տառով, օրինակ՝ Ուստիան – Ustian
փ	**ph**	Հայերենի *-փ-* տառը տառադարձվում է լատիներեն -ph- տառով, օրինակ՝ Փայլակ – Phaylak

ARMSTANDARD
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ք	**q**	Հայերենի -*ք*- տառը տառադարձվում է լատիներեն -q- տառով, օրինակ՝ Քրիստինե – Qristine, Քուչակ – Quchak
և	**ev**	Հայերենի -*և*- տառը տառադարձվում է ev- տառակապակցությամբ, օրինակ՝ Պարգև - Pargev
օ	**o**	Հայերենի -*օ*- տառը տառադարձվում է լատիներեն -*o*- տառով, օրինակ՝ Օվսաննա – Ovsanna, Օնիկ – Onik
ֆ	**f**	Հայերենի -*ֆ*- տառը տառադարձվում է լատիներեն -*f*- տառով, օրինակ՝ Ֆրիդա - Frida, Ֆարհադ – Farhad

ARMSTANDARD
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

© SARM- Բոլոր իրավունքները պաշտպանված են

Մատենագիտություն

ГОСТ 7.79-2000 Система стандартов по информации, библиотечному и издательскому делу. Правила транслитерации кирриловского письма латинским алфавитом

ISO 9-1995 Information and documentation. Transliteration of Cyrillic characters into Latin characters. Slavic and non-Slavic languages

ARMSTANDARD
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

Հանգուցային բառեր. գրադարձություն, գրային համակարգ, գրային համակարգի փոխարկում, դիակրիտիկ նշան, այբուբեն, տառ

ՍԴ 01.140.10

Գինը սահմանվում է 7 էջի համար

ARMSTANDARD
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

© SARM- Բոլոր իրավունքները պաշտպանված են

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ տնօրենի տեղակալ	Գ. Նազարյան
Ստանդարտացման բաժնի պետ	Ա. Ստեփանյան
ՀՀ արտաքին գործերի նախարարություն, հյուպատոսական վարչության իրավախորհրդատու	Ա. Խլղաթյան
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, բանասիրական գիտությունների թեկնածու	Մ. Սարգսյան
ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտե, աշխատանակազմի իրավաբանական վարչության օրենսդրության մշակման և որակավորման բաժնի մասնագետի ժ/պ	Ս. Մանուչարյան
ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի անգլերենի հնչունաբանության և քերականության ամբիոնի դոցենտ	Ս. Բաղդասարյան
ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի անգլերենի հնչունաբանության և քերականության ամբիոնի դոցենտ	Ս. Գյուրջայանց
ՀՀ ոստիկանություն, անձնագրային և վիզաների վարչության, կազմ-հաստիքային բաժնի իրավաբանական բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ	Մ. Գևորգյան

ARMSTANDARD
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

վիզաների վարչության, կազմ-հաստիքային բաժնի
մասնագետ-իրավախորհրդատու
ՔՀԾ առաջին դասի առաջատար ծառայող Ի. Մկրտչյան

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման
նախարարության միգրացիոն պետական ծառայություն,
աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ռ. Պետրոսյան

Գործարար կառավարման, կառավարման
համակարգերի և համապատասխանության
գնահատման ոլորտների մասնագետ Լ. Հովհաննիսյան

ARMSTANDARD
ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ